«Շտիգեն» ՍՊԸ
0069, Հայաստան, Երևան,
Դ. Անհաղթ 23, 6-րդ տարածք
Հեռ. +374 11 23 00 23
Կայք. www.shtigen.com

Shtigen LLC
23, 6th area D. Anhaght
Yerevan, Armenia, 0069
Tel: +374 11 23 00 23
Web: www.shtigen.com

ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. **Տեղադրված արևային կայանի համար համաձայն Պայմանագրի գործում է երաշխիքային սպասարկում՝ հետևյալ պայմաններով.**

1.1. Արևային վահանակների մասով գործում է երաշխիքային ժամկետ՝

- SunPower - 25 (քսանհինգ) տարի
- Recom Solar - 25 (քսանհինգ) տարի
- Hyundai - 15 (տասնհինգ) տարի
- SEG Solar - 15 (տասնհինգ) տարի
- Tongwai - 15 (տասնհինգ) տարի
- Topcp Solar - 15 (տասնհինգ) տարի
- Longi - 12 (տասներկու) տարի
- PhonoSolar - 12 (տասներկու) տարի
- Talesun – 10 (տասը) տարի

և եթե արևային վահանակները չեն ապահովում ստորև ներկայացված տեխնիկական բնութագրերը, ապա արևային վահանակը ենթակա է փոխարինման, բացառությամբ սույն հավելվածի 2 և 3 կետերով նախատեսված դեպքերի.

➢ 25 (քսանհինգ) տարի անց արևային վահանակների դեգրադացիայի մակարդակը չպետք է գերազանցի 15-17 %-ը:

1.2. Փոխակերպիչի համար գործում է երաշխիքային ժամկետ՝

- KSTAR - 5 (հինգ) տարի
- Fronius - 5 (հինգ) տարի
- MPP Solar - 1 (մեկ) տարի

1.3. Արևային կայանի համակցման դետալների և նյութերի համար գործում է երաշխիքային ժամկետ՝ 1 (մեկ) տարի: Երաշխիքային ժամկետի հաշվարկը սկսվում է՝ հանձման-ընդունման ակտը ստորագրելու պահից և ժամկետները վերանայման ենթակա չեն:

1.4. Արևային ֆոտովոլտային կայանի անվճար երաշխիքային սպասարկման ժամկետը 1 (մեկ) տարի է, երաշխիքային ժամկետը սպառվելուց հետո Պատվիրատուն պարտավորվում է վճարում կատարել իրականացրած աշխատանքների և/կամ մատակարարված համակցման դետալների համար (որոնց համար երաշխիքային սպասարկումը չի գործում), որի համար Մատակարարի և Պատվիրատուի միջև կնքվում է սպասարկման աշխատանքների կատարման պայմանագիր:

2. **Երաշխիքային սպասարկումը համարվում է կասեցված կամ դադարեցված, եթե Պատվիրատուի կողմից չեն պահպանվել հետևյալ դրույթները՝**

- չի պահպանվել Ապրանքի մեխանիկական կոնստրուկցիաների դիրքը և/կամ հորիզոնի նկատմամբ անկյունը ենթարկվել է փոփոխության,

- փոխվել է կայանի փոփոխական և/կամ հաստատուն հոսանքի էլեկտրական միացումները,
- Պատվիրատուի կողմից կատարվել է արևային կայանի և համակցման դետալների վերանորոգման փորձ,
- տեղադրվել է գեներատոր, առանց Մատակարարին տեղյակ պահելու և Մատակարարի կողմից հաստատումը ստանալու,
- Պատվիրատուի կողմից չի պահպանվել խնամքի, մաքրման, լվացման կանոնները,
- Պատվիրատուի կողմից չի պահպանվել տեխնիկական անվտանգության կանոնները և նորմերը, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ,
- բաշխիչ ցանցերի կողմից չի ապահովվել էլեկտրաէներգիայի մշտական սնուցումը՝ առանց տատանումների,
- առաջացած խնդիրների դեպքում Պատվիրատուն տեղյակ չի պահել Մատակարարին,
- Ապրանքը չի օգտագործել ըստ նշանակության և իրականացվել է փոփոխություն և/կամ միջամտություն Պատվիրատուի կողմից,
- Պատվիրատուի կողմից չի պահպանվել միացման հանգույցները պատահական կոնտակտներից և չի ձեռնարկվել միջոցառումներ, որոնք կբացառեին կոնտակտային շանթահարումը, այրումը, հրդեհի առաջացումը,
- ֆիզիկական ուժի ներգործությամբ արևային կայանի վրա առաջացել է արտաքին մեխանիկական վնասվածք,
- կատարվել է մեխանիկական ներգործություն արևային կայանի վրա,
- տեղի է ունեցել միջամտություն վարդակների կամ ավտոմատ անջատիչների վրա, որոնցից սնուցվում է արևային կայանը, կամ նույն վարդակից զուգահեռ միացված է եղել այլ էլեկտրական սարքավորում,
- հեռացվել և/կամ խեղվել է որևէ հանգույց, միավոր կամ մաս, որը տեղադրված է եղել Մատակարարի կողմից,
- տեղի է ունեցել միջամտություն արևային կայանի որևէ մասի վրա, մասնավորապես՝ ներկում և/կամ դրան (կամ դրա համակցման դետալներին) ամրացում, հենում որևէ առարկա և/կամ պիտակ՝ առանց Մատակարարի հետ համաձայնեցման,
- Ապրանքի վրա դիտավորությամբ, կամ այլ եղանակով, որը հնարավոր չէր կանխել՝ ուղղվել է որևէ ճառագայթ և/կա արհեստական ստեղծված լույս կամ լուսային ալիքներ,
- արևային կայանի մոտակայքում իրականացվել է եռակցման, մետաղի ծուլման, զոդման, շինարարական կամ այլ համանման աշխատանքներ, որոնք կարող են պատճառ հանդիսանալ արևային կայանի ուղղակիորեն կամ անուղղակիորեն աշխատանքի խաթարմանը կամ վատթարացմանը,
- արևային կայանին մոտ տեղադրվել, օգտագործվել և/կամ պահպանվել է որևէ դյուրավառ նյութ, որի պահպանման կանոններն ու նորմերը ՀՀ օրենսդրությամբ կամ սահմանված այլ նորմերով պահպանված չեն եղել,
- արևային կայանը Պատվիրատուի կողմից ընդունելուց հետո արևային կայանի կոմպլեկտայնության վերաբերյալ մատակարարին պահանջ չի կարող ներկայացվել: Երաշխիքի առարկա չի կարող հանդիսանալ նաև աշխատանքի արդյունքի տեսքի ցանկացած վատթարացում, ներառյալ քերվածքներ, բծեր, մեխանիկական մաշվածություն, ժանգոտում, բորբոսում, գույնի խամրում և այլ փոփոխություններ, որոնք առաջանում են Պատվիրատուին ապրանքը հանձնելուց հետո:

3. Արևային կայանի հանձնում-ընդունումն իրականացնելուց հետո, արևային կայանի աշխատանքի թերությունների համար Մատակարարը պատասխանատվություն չի կրում, եթե թերությունները ծագել են Պատվիրատուի կողմից աշխատանքի արդյունքն ընդունելուց հետո՝ Պատվիրատուի կողմից աշխատանքի արդյունքն օգտագործելու կամ պահպանելու կանոնները խախտելու կամ երրորդ անձանց գործողությունների կամ անհաղթահարելի ուժի հետևանքով: Սույն կետի իմաստով, անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած վնասվածքները ներառում են, բայց չեն սահմանափակվում.

- պատերազմի, բնական աղետների (երկրաշարժ, ջրհեղեղ, կայծակնահարություն, կարկտահարություն, փոթորիկներ, հրաբխի ժայթքում և այլն), տեխնոգեն աղբյուրներից շանթահարման, ոչ պատշաճ լարման հզորության ճեղքվածքների, հրդեհի, վանդալիզմի, կեղծարարության և (կամ) անհաղթահարելի այլ ուժի հետևանքով առաջացած վնասվածքները:

4. Երաշխիքային ժամկետում սույն պայմանագրի համաձայն վերացման ենթակա թերությունների հայտնաբերման դեպքում Պատվիրատուն թերությունները հայտնաբերելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր ծանուցում է թերությունների մասին Մատակարարին՝ պարտադիր ներկայացնելով.

- թերության մանրամասն նկարագրությունը,
- թերության վերաբերյալ ապացույցներ, այդ թվում՝ լուսանկարներ
- արևային կայանի բաղկացուցիչ մասերի համապատասխան սերիական համարները,
- երաշխիքի մասին հավաստող փաստաթուղթը, որը տրամադրվել է Մատակարարի կողմից,
- արևային կայանի գտնվելու հասցեն, որը պետք է համընկնի Մատակարարի կողմից Ապրանքի տեղադրման հասցեի հետ,
- այլ տվյալներ, որոնք կպահանջվեն Մատակարարի կողմից

5. Աշխատանքն ընդունելուց հետո, երաշխիքային ժամկետում հայտնաբերված թերությունները սույն պայմանագրի համաձայն Մատակարարը վերացնում է՝ թերությունների վերացման մասին գրավոր ծանուցում ստանալուց հետո, համապատասխան ապրանքների առկայության դեպքում 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ավել քան 30 օրացուցային օրը:

6. Թերությունների վերացման միջոցները և ձևերը, այդ թվում նաև թերությունների վերացման համար ապրանքի և (կամ) դրա մի մասի փոխարինման և (կամ) նորոգման տարբերակը, որոշում և ընտրում է Մատակարարը:

7. Ապրանքի և (կամ) դրա մի մասի փոխարինման դեպքում, դրանք փոխարինվում են համարժեք տեխնիկական բնութագրով և ելքային տվյալներով ապրանքով և (կամ) դրա մասով՝ հաշվի առնելով տեխնիկական նաև ապրանքի դեգրադացիայի աստիճանը: Հանված և փոխարինված ապրանքները վերադարձվում են Մատակարարի պահեստ:

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Արևային կայանի համար տրված տարեկան միջին կՎտ/ժ էներգաարտադրողականության վիճակագրական ճշտությունը կարող է գնահատվել +/-5%՝ բացառելով վերոհիշյալ և ֆորս մաժորային գործոնները, ինչպես նաև պայմանով, որ չեն խախտվել համակարգի շահագործման, խնամքի և պահպանման պայմանները: Արևային կայանը գտնվելու է Մատակարարի անմիջական վերահսկողության ներքո կայանի շահագործման առաջին տարվա ընթացքում, որն էլ բացառում է տարեկան միջին արտադրողականության տվյալի +/-5%-ից առավել շեղումը:

«Շտիգեն» ՍՊԸ
0069, Հայաստան, Երևան,
Դ. Անհաղթ 23, 6-րդ տարածք
Հեռ. +374 11 23 00 23
Կայք. www.shtigen.com

Shtigen LLC
23, 6th area D. Anhaght
Yerevan, Armenia, 0069
Tel: +374 11 23 00 23
Web: www.shtigen.com

Ինչպես նաև առցանց մշտադիտարկման համակարգի աշխատանքի համար Պատվիրատուն պետք է ապահովի Արևային կայանի փոխակերպիչի համար անխափան ինտերնետ հասանելիություն:

Տրամադրված բոլոր տվյալները՝ կապված էլեկտրաարտադրողականության հետ, հիմնված են միջին վիճակագրական տվյալների վրա և չեն ներառում հետևյալ հնարավոր գործոնները՝

- բնակլիմայական շեղումներ, այդ թվում նաև՝ ծայրահեղ ջերմային կամ ջերմաստիճանի արագ փոփոխում,
- Բաշխիչ ցանցերի կողմից տրամադրված էլեկտրաէներգիայի պարամետրերի շեղումներ/անջատումներ,
- շրջակա միջավայրի բացասական ազդեցությունը՝ կապված արևային կայանի վրա ստվերայնության փոփոխման, ինչպես նաև վահանակների մակերևույթին փոշու և աղտոտվածության հետ:

«Շտիգեն» ընկերությունը խստագույնս հետամուտ է լինելու իր բարի համբավի և անվան հետ կապված վարկաբեկման փաստերի հեղինակներին օրենքի սահմաններում իրավական պատիժ սահմանելուն: